ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ
ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նախագահ Սիմոն Բաբայանի, խորհրդի անդամներ՝ Ռոման Ահարոյանի, Թամարա Բաղդասարյանի, Էմին Բեգլարյանի, Պավել Գյուլումյանի, Արսեն Հարությունյանի, Վարազդատ Հարությունյանի, Ցոլակ Մարգարյանի, Դավիթ Մելքոնյանի, Լիլիթ Ղազանչյանի և Մարինե Ֆարմանյանի,

քննության առնելով Պալատի 2024 թվականի տարեկան ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ իրականացված անկախ աուդիտորական եզրակացությունը հաստատելու հարցը,

հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պալատի խորհրդի 24.01.2025թ. թիվ 3/10-Լ որոշմամբ Պալատի 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության ստուգման նպատակով աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնելու համար որպես անկախ աուդիտ ընտրվել էր «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊ ընկերությունը, որը կատարված ուսումնասիրությունների արդյունքում 10.04.2025թ. ներկայացրել է անկախ աուդիտորական եզրակացություն,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետի և Պալատի կանոնադրության 16.5 կետի 4-րդ ենթակետի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Հաստատել Պալատի 2024 թվականի ֆինանսատնտեսական գործունեության աուդիտ (հերթական աուդիտ) իրականացնող «Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊ ընկերության 10.04.2025թ. անկախ աուդիտորական եզրակացությունը:

2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշման հրապարակումը Պալատի կայքէջում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
խորհրդի նախագահ՝ Սիմոն Բաբայան

18 ապրիլի 2025թ.
թիվ 8/9-Լ
ք. Երևան